# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gymri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» հունիսի 2026 թվականի N 1881 Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆՆԱ ՌԱԶՄԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏՐԴ.ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՓՈՂՈՑ 17 ՇԵՆՔ 3 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ՄԱՐԻԱՄ ԱՐՇԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՇԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԵՎ ԱՆՈՒՇ ԱՐՇԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի հունիսի 4-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Աննա Ռազմիկի Պետրոսյանը (անձնագիր՝ AT0605173, տրված՝ 08.12.2020 թվականին 016-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 06 հոկտեմբերի 2008 թվականին ծնված Մարիամ Արշակի Պետրոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №261075), 07 հոկտեմբերի 2010 թվականին ծնված Հովհաննես Արշակի Պետրոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №095504) և 26 սեպտեմբերի 2012 թվականին ծնված Անուշ Արշակի Պետրոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №224270) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տրդ.Ճարտարապետի փողոց 17 շենք 3 բնակարանի մասնաբաժինները:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատերեր են հանդիսանում նաև անչափահասներ՝ Մարիամ Արշակի Պետրոսյանը, Հովհաննես Արշակի Պետրոսյանը և Անուշ Արշակի Պետրոսյանը (հիմք՝ «27» նոյեմբերի 2015 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27112015-08-0020):

Նիստին ներկա գտնվող անչափահասների մայրը՝ Աննա Ռազմիկի Պետրոսյանը և հայրը՝ Արշակ Ժորայի Պետրոսյանը հայտնեցին, որ իրենց ընտանիքին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան գյուղի 6-րդ փողոց 3-րդ նրբանցք 2 բնակելի տունը, որտեղ և ներկա պահին բնակվում են (հիմք՝ 5 հունիսի 2023 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05062023-08-0026), (հիմք՝ տեղեկանք N 15674 տրված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից):

Նիստին ներկա գտնվող անչափահասներ՝ Մարիամ Արշակի Պետրոսյանը, Հովհաննես Արշակի Պետրոսյանը և Անուշ Արշակի Պետրոսյանը տվել են համաձայնություն իրենց մասնաբաժինները վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի, 30-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Աննա Ռազմիկի Պետրոսյանի 2026 թվականի հունիսի 4-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 8155 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 19-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Աննա Ռազմիկի Պետրոսյանին (անձնագիր՝ AT0605173)՝ վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 06 հոկտեմբերի 2008 թվականին ծնված Մարիամ Արշակի Պետրոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №261075), 07 հոկտեմբերի 2010 թվականին ծնված Հովհաննես Արշակի Պետրոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №095504) և 26 սեպտեմբերի 2012 թվականին ծնված Անուշ Արշակի Պետրոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №224270) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տոն.Ծարտարապետի փողոց 17 շենք 3 բնակարանի մասնաբաժինները, բնակարանային պայմանները բարելավելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աննա Ռազմիկի Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«22» հունիսի 2026 թվականի N 1882Ա

## ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ՝ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՉԱԽՈՅԱՆԻ ԵՎ ՆԱՐԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՉԱԽՈՅԱՆԻ ՀԵՏԱԳԱ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի հունիսի 18-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Աննա Վահանի Չախոյանը (անձնագիր՝ AS0542412, տրված՝ 05.02.2019 թվականին 064-ի կողմից)՝ խնդրելով իր անչափահաս երեխաների՝ 17 մայիսի 2018 թվականին ծնված Նարեկ Հարությունի Չախոյանի (ծննդյան վկայական՝ III-CT №880284) և 09 հոկտեմբերի 2023 թվականին ծնված Նարե Հարությունի Չախոյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ767049) հետագա խնամքը և դաստիարակությունը կազմակերպել շուրջօրյա խնամք տրամադրող որևէ հաստատությունում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը երեխաների մոր՝ Աննա Վահանի Չախոյանի հետ ունեցած հարցազրույցից պարզել է, որ ներկայումս չունի մշտական բնակության վայր, չի կարող աշխատել, ֆինանսական ծանր վիճակի հետ կապված խնդիրների պատճառով վերջինս չի կարող պատշաճ զբաղվել իր երեխաների խնամքով և դաստիարակությամբ:

Անչափահասներ՝ Նարեկ Հարությունի Չախոյանը և Նարե Հարությունի Չախոյանը միայնակ մոր երեխաներ են:

Ելնելով անչափահաս երեխաների լավագույն շահից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26 մայիսի 2016 թվականի N 551-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 1613-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Աննա Վահանի Չախոյանի 2026 թվականի հունիսի 18-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 9053 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 19-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Անչափահասներ՝ 17 մայիսի 2018 թվականին ծնված Նարեկ Հարությունի Չախոյանի (ծննդյան վկայական՝ III-CT №880284) և 09 հոկտեմբերի 2023 թվականին ծնված Նարե Հարությունի Չախոյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ767049) հետագա խնամքը և դաստիարակությունը կազմակերպել շուրջօրյա բաղադրիչով ճգնաժամային աջակցության որևէ կենտրոնում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ**

2026-06-12 11:36:06 GMT+4

mID

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թվական քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունիսի 2026 թվականի N 1883-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՔՍԻ ՀՈՎԱԿԻՄԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑ 8 ՇԵՆՔ 47/1 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՄԱԹԵՎՈՍ ՍՈՒՐԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԲԱԺԻՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի հունիսի 19-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Արաքսի Հովակիմի Վարդանյանը (անձնագիր՝ AL0357980, տրված՝ 27.07.2023 թվականին 064-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն օտարելու իր անչափահաս երեխայի՝ 27 ապրիլի 2009 թվականին ծնված Մաթևոս Սուրենի Վարդանյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №303461) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոց 8 շենք 47/1 բնակարանի բաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակարանի գրանցված իրավունքի սուբյեկտ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքը (հիմք՝ 27 մարտի 2026 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27032026-08-0066):

Նիստին ներկա գտնվող անչափահասի մայրը՝ Արաքսի Հովակիմի Վարդանյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի՝ 01 հունիսի 2026 թվականի N 1668-Ա որոշումը, որով վերոնշյալ հասցեի բնակարանը որպես ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով նվիրատվության եղանակով օտարվել է Արաքսի Հովակիմի Վարդանյանին և իր երեխաներին:

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Մաթևոս Սուրենի Վարդանյանը տվել է համաձայնություն իր բաժինը օտարելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Արաքսի Հովակիմի Վարդանյանի 2026 թվականի հունիսի 19-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 9118 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 19-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Համաձայնություն տալ Արաքսի Հովակիմի Վարդանյանին (անձնագիր՝ AL0357980)՝ օտարելու իր անչափահաս երեխայի՝ 27 ապրիլի 2009 թվականին ծնված Մաթևոս Սուրենի Վարդանյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №303461) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոց 8 շենք 47/1 բնակարանի բաժինը, իրավունքների պետական գրանցում իրականացնելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արաքսի Հովակիմի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2026 թվական քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունիսի 2026 թվականի N 1884 Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՓԻՆԵ ՀՐԱՆՏԻ ՊԱԼՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ 30 ՇԵՆՔ 3 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐՄԵՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԵՎ ԴԱՎԻԹ ԱՐՄԵՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի հունիսի 19-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Արփինե Հրանտի Պալոյանը (նույնականացման քարտ՝ 014157382)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 24 մայիսի 2012 թվականին ծնված Սուսաննա Արմենի Մելքոնյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №186447) և 26 օգոստոսի 2019 թվականին ծնված Դավիթ Արմենի Մելքոնյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ157655) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արամ Խաչատրյան փողոց 30 շենք 3 բնակարանի մասնաբաժինները:

Երեխաների հայրը՝ Արմեն Գագիկի Մելքոնյանը մահացել է 2025 թվականի հունվարի 4-ին (հիմք՝ մահվան վկայական XI-ՄՅ №883270):

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատերեր են հանդիսանում նաև անչափահասներ՝ Սուսաննա Արմենի Մելքոնյանը և Դավիթ Արմենի Մելքոնյանը (հիմք՝ 3 սեպտեմբերի 2025 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 03092025-08-0003):

Նիստին ներկա գտնվող անչափահասների մայրը՝ Արփինե Հրանտի Պալոյանը հայտնեց, որ իր ընտանիքին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արամ Խաչատրյան փողոց 30 շենք 7 բնակարանը որտեղ և ներկա պահին բնակվում են (հիմք՝ 2 օգոստոսի 2021 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02082021-08-0025), (հիմք՝ տեղեկանք №064 տրված՝ 18.06.2026 թվականին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի <ԳԱՐՈՒՆ> համատիրության կողմից):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Սուսաննա Արմենի Մելքոնյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի, 30-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի

Արփինե Հրանտի Պալոյանի 2026 թվականի հունիսի 19-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 9147 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 19-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Արփինե Հրանտի Պալոյանին (նույնականացման քարտ՝ 014157382)՝ վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 24 մայիսի 2012 թվականին ծնված Սուսաննա Արմենի Մելքոնյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №186447) և 26 օգոստոսի 2019 թվականին ծնված Դավիթ Արմենի Մելքոնյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ157655) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արամ Խաչատրյան փողոց 30 շենք 3 բնակարանի մասնաբաժինները, բնակարանային պայմանները բարելավելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արփինե Հրանտի Պալոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ**

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թվական քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

**«22» հունիսի 2026 թվականի N 1885-Ա**

### ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՐԱՆՈՒՇ ՎԱՉԱԳԱՆԻ ԾԱՏՐՅԱՆԻՆ ԻՐ ՈՐԴՈՒ՝ ՄԱՆՎԵԼ ՄԱՐԱՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի մայիսի 27-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Հրանուշ Վաչագանի Ծատրյանը (անձնագիր՝ AX0571709, տրված՝ 12.12.2024 թվականին 099-ի կողմից) խնդրելով իրեն նշանակել խնամակալ իր անգործունակ ճանաչված որդու՝ 18 սեպտեմբերի 2007 թվականին ծնված Մանվել Մարատի Սարգսյանի (անձնագիր՝ AX0606750, տրված՝ 29.01.2025 թվականին 016-ի կողմից) նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 19 մարտի 2026 թվականի թիվ ՇԴ/1691/02/25 վճռով Մանվել Մարատի Սարգսյանը ճանաչվել է անգործունակ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված տեղեկությունների համաձայն դիմումատուն՝ Հրանուշ Վաչագանի Ծատրյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

Համաձայն Հայաստանի Հանրապետության «ԵՐԱԶ» համատիրության կողմից տրված տեղեկանքի Հրանուշ Վաչագանի Ծատրյանը իր անգործունակ ճանաչված որդու՝ Մանվել Մարատի Սարգսյանի հետ համատեղ բնակվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 11 փողոց 3 շենք 13 բնակարանում (հիմք՝ տեղեկանք, տրված՝ 21.05.2026 թվականին):

Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնը տվել է դրական եզրակացություն Հրանուշ Վաչագանի Ծատրյանին Մանվել Մարատի Սարգսյանի նկատմամբ խնամակալ ճանաչելու մասին (հիմք՝ եզրակացություն N 464 տրված՝ 11.06.2026 թվականին):

Ելնելով անգործունակ ճանաչված Մանվել Մարատի Սարգսյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Հրանուշ Վաչագանի Ծատրյանի 2026 թվականի մայիսի 27-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 7735 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և

հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 19-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Սահմանել խնամակալություն՝ Հրանուշ Վաչագանի Ծատրյանին (անձնագիր՝ AX0571709) նշանակել խնամակալ թիվ ՇԴ/1691/02/25 վճռով անգործունակ ճանաչված իր որդու՝ 18 սեպտեմբերի 2007 թվականին ծնված Մանվել Մարատի Սարգսյանի (անձնագիր՝ AX0606750) նկատմամբ։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հրանուշ Վաչագանի Ծատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ**

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թվական քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«22» հունիսի 2026 թվականի N 1886Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ՄԵԼԱՆՅԱ ՍԱՄՍՈՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏՐԴ.ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՓՈՂՈՑ 17 ՇԵՆՔ 3 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ԱՐՇԱԿ ԱԼԵՔՍԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի հունիսի 4-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Մելանյա Սամսոնի Պետրոսյանը (անձնագիր՝ AV0488480, տրված՝ 20.10.2022 թվականին 016-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 28 նոյեմբերի 2014 թվականին ծնված Արշակ Ալեքսանի Պետրոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №378745) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տրդ.Ճարտարապետի փողոց 17 շենք 3 բնակարանի մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Արշակ Ալեքսանի Պետրոսյանը (հիմք՝ «27» նոյեմբերի 2015 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27112015-08-0020):

Նիստին ներկա գտնվող անչափահասի մայրը՝ Մելանյա Սամսոնի Պետրոսյանը և հայրը՝ Ալեքսան Արշակի Պետրոսյանը հայտնեցին, որ իրենց ընտանիքը փաստացի բնակվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան գյուղի 6-րդ փողոց 3-րդ նրբանցք 2 բնակելի տանը (հիմք՝ տեղեկանք N 15674 տրված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Արշակ Ալեքսանի Պետրոսյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Մելանյա Սամսոնի Պետրոսյանի 2026 թվականի հունիսի 4-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 8156 թվագրությամբ) և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 19-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Մելանյա Սամսոնի Պետրոսյանին (անձնագիր՝ AV0488480)՝ վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 28 նոյեմբերի 2014 թվականին ծնված Արշակ Ալեքսանի Պետրոսյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №378745) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տրդ.Ճարտարապետի փողոց 17 շենք 3 բնակարանի մասնաբաժինը, բնակարանային պայմանները բարելավելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մելանյա Սամսոնի Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական քաղաք Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2026 **թվականի** N 1887 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի № 953-Ա ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի № 1424 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի № 41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մշի կոմբինատ թաղամասի հարեվանությամբ գտնվող 291.5 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան եվ դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 597 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Սամվել Գեվորգի Ամատունուն սեփականության իրավունքի ճանաչման մասին» № 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել (հիմք՝ ըստ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին № Կ-17042026-08-0141 ՀՀ կադաստրի կոմիտեի որոշում) ներկայացվել է ճշգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մշի կոմբինատ թաղամասի հարեվանությամբ գտնվող 291.5 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան եվ դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 597 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Սամվել Գեվորգի Ամատունուն սեփականության իրավունքի ճանաչման մասին» № 41-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին և 2-րդ կետերում «հարևանությամբ» բառը փոխարինել «2-րդ շարք № 18/3 » թվերով և բառերով:
2) Վերնագրում, նախաբանում «597 (հինգ հարյուր իննսունյոթ)» թվերը և բառերը փոխարինել «562.1 (հինգ հարյուր վաթսուներկու ամբողջ մեկ տասնորդական)» թվերով և բառերով, «291.5 (երկու հարյուր իննսունմեկ ամբողջ հինգ տասնորդական)» թվերը և բառերը փոխարինել «261.3 (երկու հարյուր վաթսունմեկ ամբողջ երեք տասնորդական) թվերով և բառերով:
3) Որոշման 2-րդ կետում «197 (մեկ հարյուր իննսունյոթ)» թվերը և բառերը փոխարինել «162.1 (մեկ հարյուր վաթսուներկու ամբողջ մեկ տասնորդական)» թվերով և բառերով, «369966 (երեք հարյուր վաթսունինը հազար ինը հարյուր վաթսունվեց» թվերը և բառերը փոխարինել «304423 (երեք հարյուր չորս հազար չորս հարյուր քսաներեք» թվերով և բառերով:

2. Գյումրի համայնքի ղեկավարի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի հունվարի 12-ի № 41-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2026 թվականի մարտի 27-ի

№ 953-Ա և Գյումրի համայնքի ղեկավարի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի մարտի 27-ի № 953-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու եվ 2026 թվականի հունվարի 12-ի № 41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 6-ի № 1424-Ա որոշումները ճանաչել ուժը կորցրած:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Գևորգի Ամատունուն պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ.. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01 Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«23» հունվարի 2026 թվականի N 1888

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագրի գործառնական ձեռնարկի պահանջները և նպատակ ունենալով ապահովել համայնքում նախատեսված ենթածրագրերի իրականացման ընթացքում տեղական մակարդակում համակարգումը, շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև հետադարձ կապի և բողոքների մեխանիզմի արդյունավետ գործառնությունը⍰

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ստեղծել տեղական աշխատանքային խումբ (ՏԱԽ) կլաստերի զարգացման պլանի իրականացման նպատակով:

2.Հաստատել ՏԱԽ պարտադիր կազմը հետևյալ կազմով.

1) Ավետիս Առաքելյան- համայնքի ղեկավարի փոխարինող, ՏԱԽ նախագահ
2) Կարեն Մալխասյան- համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
3) Կարեն Բադիշյան- Շիրակի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ
4) Լիլիթ Թովմասյան -համայնքապետարանի Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ
5) Էդգար Մարտիրոսյան- համայնքապետարանի Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի տեղակալ
6) Հրանուշ Բադալյան –Ծրագրերի և արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ
7) Արմեն Հովսեփյան- Ծրագրերի և արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետ
8) Կարուշ Գրիգորյան - Ծրագրերի և արտաքին կապերի բաժնի առաջին կարգի մասնագետ
9) Պարգև Հարությունյան- Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

10) Կարեն Բարսեղյան - «Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ» ՀՈԱԿ տնօրեն

11) Լիլիթ Մակարյան - «Երիտասարդական պալատ» ՀՈԱԿ տնօրեն

Ըստ անհրաժեշտության ՏԱԽ նիստերին կհրավիրվեն նաև կապալառու և ծառայություններ մատուցող կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնավոր հատվածին երկայացուցիչներ, բնակիչներ, ենթածրագրի իրականացման բնակավայրի վարչական ղեկավարը:

3.Սահմանել ՏԱԽ հիմնական գործառույթները՝

1)Աջակցել և համակարգել ենթածրագր(եր)ի իրականացումը տեղական մակարդակում:

2)Հավաքագրել և ծրագրի աշխատանքային խմբին փոխանցել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տվյալները, փաստաթղթերը և տեղեկատվությունը:

3)Աջակցել թույլտվությունների ստացմանը, համայնքի իրավասության շրջանակում առաջացող խնդիրների և խոչընդոտների լուծմանը, ինչպես նաև ապահովել ծրագրային միջոցառումների ժամանակին իրականացումը:

4)Ապահովել Ծրագրի վերաբերյալ հաղորդակցությունը շահառուների, տեղական բնակչության և համայնքային կառույցների հետ:

5)Քննարկել տեղական մակարդակում առաջացող խնդիրներն ու մարտահրավերները, առաջարկել իրատեսական լուծումներ և դրանք ներկայացնել ծրագրի պատասխանատու մարմիններին՝ համապատասխանաբար Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աշխատակիցների և/կամ Զբոսաշրջության կոմիտեի հետ սերտ համագործակցությամբ:

6)Իրականացնել հողօգտագործման, առկա ենթակառուցվածքների վիճակի և այլ ընթացակարգերի հետ կապված գործընթացների ստուգում՝ համաձայն ծրագրի պահանջների, ընթացակարգերի և ժամկետների, համաշխարհային բանկի համապատասխան ուղեցույցների շրջանակում և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աշխատակիցների և/կամ Զբոսաշրջության կոմիտեի համակարգմամբ:

4.Նշանակել Լիլիթ Թովմասյանին որպես համայնքային կապերի պատասխանատու՝ հետադարձ կապի և բողոքների կառավարման մեխանիզմի գործարկումը ապահովելու նպատակով:

5.Սահմանել, որ՝

1)ՏԱԽ կազմում կանանց մասնակցությունը պետք է կազմի առնվազն 30 տոկոս,

2)ՏԱԽ նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ,

3)Նիստերի արձանագրությունները ներկայացվում են ծրագրի աշխատանքային խմբին և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին,

4) ՏԱԽ գործունեությունն իրականացվում է ծրագրի գործառնական ձեռնարկին համապատասխան:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ

. 2026 թվական քաղաք Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«23» հունիսի 2026 թվականի N 1889-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ « ՁՅՈՒՆԻԿ –ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԳԱՅԱՆԵ ԼԵՌՆԻԿԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Գայանե Լեռնիկի Տոնոյանի 2026 թվականի հունիսի 19-ի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի « Ձյունիկ-մսուր մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության ( այսուհետ՝ կազմակերպություն ) տնօրենի աշխատանքային պարտականությունները կատարող Գայանե Լեռնիկի Տոնոյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2026 թվականի հունիսի 23-ից:
2. Չվճարվող արձակուրդի տևողությունը 8 օր՝ 2026 թվականի հունիսի 23-ից 30-ը ներառյալ:
3. Չվճարվող արձակուրդի ընթացքում Գայանե Լեռնիկի Տոնոյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության դաստիարակ Արմինե Բորիսի Հարոյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Լեռնիկի Տոնոյանին և Արմինե Բորիսի Հարոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հունիսի 2026 **թվականի** N 1890Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության աթլետիկայի պատանիների 2026 թվականի հունիսի 27-28-ը Արտաշատ համայնքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով աթլետիկայի ֆեդերացիայի 2026 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2026 թվականի հունիսի 23-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության աթլետիկայի պատանիների առաջնությանը գործուղման ծախսերի 2026 թվականի հունիսի 27-28-ը համայնք Արտաշատ գործուղել 10 մարզիկի և 2 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս) 48.000(քառասունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2026 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թ.
_հունվարի_ __24__ N__1890__ որոշման

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության աթլետիկայի պատանիների առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/ մարզիչ | Անձնագիր | Սոցքարտ | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մանուկյան | Արսեն | մարզիկ | AX0306242 | 2621100295 | 1570036451554500 | 4.000 |
| 2. | Հակոբյան | Ժորիկ | մարզիկ | AX0320246 | 2331100357 | 1510095142911400 | 4.000 |
| 3. | Գրիգորյան | Ռաֆիկ | մարզիկ | AL0681217 | 1728090601 | 11802056110600 | 4.000 |
| 4. | Մարոյան | Տիգրան | մարզիկ | AL0576547 | 4023090263 | 2470093779920000 | 4.000 |
| 5. | Պողոսյան | Կոլյա | մարզիկ | AL0486918 | 2024100211 | 1570055659066500 | 4.000 |
| 6. | Պապիկյան | Հայկ | մարզիկ | AX0406917 | 2731090650 | 1570075918439100 | 4.000 |
| 7. | Մկրտչյան | Արամ | մարզիկ | AX0267687 | 1721110224 | 2472607713130000 | 4.000 |
| 8. | Հարությունյան | Արամե | մարզիկ | AO0291323 | 2530090246 | 1570006098810900 | 4.000 |
| 9. | Ավագյան | Ռուզաննա | մարզիկ | AX0246175 | 7824110354 | 19300508501700 | 4.000 |
| 10. | Թամոյան | Սոնա | մարզիկ | AX0386551 | 7524100372 | 1510010614736100 | 4.000 |
| 11. | Բարսեղյան | Գրիգոր | մարզիչ | 019771914 | 1107790387 | 15100303188831 | 4.000 |
| 12. | Ոսկույան | Սամվել | մարզիչ | 012183869 | 2712680154 | 15100434542845 | 4.000 |
| Ընդամենը | | | | | | | 48.000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ
## ՔԱՂԱՔԱՑԻ ՄԻՔԱՅԵԼ ԹԱԴԵՎՈՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«24» «հունիսի» 2026 թվական N 1891 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հունիսի 23-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Միքայել Թադևոսի Վարդանյանի (ՀԾՀ՝4009970316, հասցե՝ ք.Գյումրի, Պարոնյան փողոց, տուն 5) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Միքայել Թադևոսի Վարդանյանին պատկանող PEUGEOT 605 մակնիշի 35RL479 պետհամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2021-2025 թվականների չվճարված հարկից (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի

եկամուտների հավաքագրման բաժնի տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրամադրված տեղեկանքը):

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 2026 թվականի հունիսի 11-ի դրությամբ տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն հարկային պարտավորությունները կազմել են՝ 253.558 (երկու հարյուր հիսուներեք հազար հինգ հարյուր հիսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 193.750 (մեկ հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 59.808 (հիսունինը հազար ութ հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի համաձայն՝ իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

Իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ հարկային պարտավորությունը փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները.

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.

Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 246 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

Օրենսգրքի 247 հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Օրենսգրքի 251 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 239-րդ հոդվածի 1-ին մասի, 240-րդ հոդվածի 1-ին մասի, 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի, 242-րդ հոդվածի 1-ին մասի, 243-րդ հոդվածի 1-ին մասի, 246-րդ հոդվածի 1-ին մասի, 247-րդ հոդվածի, 251-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդված 1–ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ

հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ**

1. Քաղաքացի՝ Միքայել Թադևոսի Վարդանյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 253.558 (երկու հարյուր հիսուներեք հազար հինգ հարյուր հիսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 193.750 (մեկ հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 59.808 (հիսունինը հազար ութ հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Միքայել Թադևոսի Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Միքայել Թադևոսի Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

2026-03-24 11:32:48 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
# ՔԱՂԱՔԱՑԻ ՄԻՔԱՅԵԼ ԹԱԴԵՎՈՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«24»«հունիսի» 2026 թվական N 1892 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հունիսի 23-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Միքայել Թադևոսի Վարդանյանի (ՀԾՀ՝4009970316, հասցե՝ ք. Գյումրի, Պարոնյան փողոց, տուն 5) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Միքայել Թադևոսի Վարդանյանին պատկանող PEUGEOT 605 մակնիշի 35RL479 պետահամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով

պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2018-2020 թվականների չվճարված հարկից (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրամադրված տեղեկանքը N 19683463265814585 7):

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 2026 թվականի հունիսի 11-ի դրությամբ տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն հարկային պարտավորությունները կազմել են՝ 139.800 (մեկ հարյուր երեսունինը հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 103.116 (մեկ հարյուր երեք հազար մեկ հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 36.684 (երեսունվեց հազար վեց հարյուր ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած և նույն պահին գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում՝

9) «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքը: Նույն պահին գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 444-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ Օրենսգրքի՝ սույն հոդվածի 2-13-րդ մասերով սահմանված դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում նույն մասերով սահմանված ժամկետներում:

2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքի 112-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասում՝ 9-րդ և 10-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Համաձայն նույն օրենքի 111-րդ մասի 1-ին պարբերության 2-րդ կետի՝ Օրենսգրքի 444-րդ հոդվածում՝ 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից: ...»

Նույն օրենքի 119-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 111-րդ հոդվածի 2-րդ կետը, 112-րդ հոդվածի 3-րդ կետը ուղղ. և 113-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և գործում են մինչև 2019 թվականի հունվարի 1-ը:

2019 թվականի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Նույն օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 444-րդ հոդվածի 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ անշարժ գույքի հարկի հաշվարկման նպատակով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ ըստ անշարժ գույքի սեփականատերերի՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (ըստ հողամասերի և (կամ) դրանց համապատասխան բարելավումների) ու դրանց համապատասխան կադաստրային արժեքների ու հաշվարկային զուտ եկամուտների վերաբերյալ տեղեկությունները հարկ վճարողներին հաշվառող մարմիններ ներկայացնելուն վերաբերող դրույթն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:»:

Համաձայն նույն օրենքի 71-րդ հոդվածի վերջին պարբերության ՝ սույն օրենքի 68-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն օրենքի 1-ին հոդվածը, 6-րդ հոդվածի 2-րդ կետը, 9-րդ և 10-րդ հոդվածները, 11-րդ հոդվածի 3-րդ կետը, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, 15-րդ և 17-րդ հոդվածները, 18-րդ հոդվածի 1-ին կետը, 24-րդ, 27-րդ, 29-րդ և 30-րդ հոդվածները, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերը, 38-րդ, 48-56-րդ, 60-րդ, 63-67-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վերոգրյալ իրավանորմերից հետևում է, որ «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքը գործել է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

Հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով:

«Գույքահարկի մասին» օրենքի (այսուհետ Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝ Գույքահարկը սեփականության իրավունքով սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկ վճարող են համարվում Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների:

Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում. 2. Փոխադրամիջոցները:

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սույն օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: Ընդ որում՝ 5) փոխադրամիջոցների հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2–րդ կետի համաձայն՝ գույքահարկ վճարող ֆիզիկական անձինք գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն և տարեկան հաշվարկները կարող են մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը ներառյալ ներկայացնել՝ 2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար՝ հարկ վճարողի հաշվառման վայրի հաշվառող մարմին: Հաշվառման վայրի բացակայության դեպքում հաշվարկները ներկայացվում են հարկ վճարողի հիմնական բնակության վայրի հաշվառող մարմին: Եթե հաշվառման կամ հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա հաշվարկները ներկայացվում են փոխադրամիջոցի գրանցման վայրի հաշվառող մարմին:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ կետի, 401–րդ հոդվածի 1-ին կետի, «գույքահարկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի, 3-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ հոդվածի 2–րդ մասի, 5-րդ հոդվածի 5-րդ մասի, 8-րդ հոդվածի 1–ին մասի, 10–րդ հոդվածի 1–ին մասի, 13-րդ հոդվածի 2-րդ և 3–րդ մասերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդված 4-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1. Քաղաքացի՝ Միքայել Թադևոսի Վարդանյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 139.800 (մեկ հարյուր երեսունինը հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 103.116 (մեկ հարյուր երեք հազար մեկ հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 36.684 (երեսունվեց հազար վեց հարյուր ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Միքայել Թադևոսի Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Միքայել Թադևոսի Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

2026-06-24 11:31:38 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«24» հունիսի 2026 **թվական** N 1893 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈԲԵՐՏ ԱԼԲԵՐՏԻ ՂԱԶԱՆՉՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Ռոբերտ Ալբերտի Ղազանչյանը (անձնագիր՝ AX 0497303, տրված՝ 2024թվականի հոկտեմբերի 1-ին 064-ի կողմից,հաշվառված՝ ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի 1թաղամաս, 50/2 հասցեում), 2026 թվականի հունիսի 19-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ խնդրելով Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 1թաղամաս, 50/2 հասցեի քոթեջը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2012 թվականի մարտի 27-ի N 607-Ա որոշմամբ Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 1 թաղամաս 50/2 քոթեջը հատկացվել է Ամալյա Ղազանչյանի 10 անձից բաղկացած ընտանիքին (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2012 թվականի մարտի 27-ի N 607-Ա որոշում):

Քաղաքացի՝ Ամալյա Ռաֆիկի Ղազանչյանը մահացել է /հիմք՝ ԲԱ 701575 մահվան վկայական/:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2012 թվականի մարտի 27-ի N 607-Ա որոշմամբ տրված N 50/2 միասնական օրդերը, 2026 թվականի հունիսի 22-ի Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության N 42/94/20/194018-26 գրությունը և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի հունիսի 19-ի տեղեկանքը, անձնագրի պատճենները, 2026 թվականի հունիսի 19-ի «Գյումրի» ցանցի տեղեկանքը, Հակոբ Ալբերտի Ղազանչյանի, Ալբերտ Մարտինի Ղազանչյանի, Արթուր Ալբերտի Ղազանչյանի, Հասմիկ Ալբերտի Ղազանչյանի,Արտակ Ալբերտի Ղազանչյանի, Անի Վրեժի Մարտիրոսյանի, Ալբերտ Արտակի Մարտիրոսյանի, Ամալիա Արտակի Մարտիրոսյանի հայտարարությունները Գյումրի համայնքից Խրիմյան Հայրիկ /Թբիլիսյան խճուղի/ 1թաղամաս, 50/2 հասցեի քոթեջը նվեր ընդունելու հրաժարվելու վերաբերյալ,

Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 19-ի N 1868-Ա հասցեավորման որոշումը :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդհոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2026 թվականի հունիսի 19-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2026 թվականի հունիսի 24-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Ռոբերտ Ալբերտի Ղազանչյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Թբիլիսյան խճուղի, 6-րդ փակուղի, 4 հասցեի 76.1 (յոթանասունվեց ամբողջ 1 տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին :

բ) Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 1 թաղամաս 50/2 քոթեջը հատկացվել է Ամալյա Ղազանչյանի 10 անձից բաղկացած ընտանիքին (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2012 թվականի մարտի 27-*ի N 607-Ա որոշում ):*

*գ)* Քաղաք Գյումրի Թբիլիսյան խճուղի 1 թաղամաս քոթեջ 50/2 հասցեում հաշվառված է 10 , բնակվում է 3 անձ (հիմք՝ 2026 թվականի հունիսի 22-ի Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության N 42/94/20/194018-26 գրություն և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 17-ի տեղեկանք):

դ) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 18-ի N 1847-Ա որոշմամբ պետական գրանցման ներկայացված բնակելի տանը և դրա փաստացի զբաղեցրած սահմանազատված հողամասին տրամադրվել է հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Թբիլիսյան խճուղի, 6-րդ փակուղի,4 բնակելի տուն (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 19-ի N 1868-Ա հասցեավորման որոշում):

ե) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացի՝ Ռոբերտ Ալբերտի Ղազանչյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, վերոնշյալ քաղաքացու անվամբ ծննդյան օրվանից առ այսօր ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2026 թվականի հունիսի 19-ի N ԱՏ-19062026-99-0428, 2025 թվականի սեպտեմբերի 30-ի N ԱՏ-30092025-99-0094 տեղեկանք):

զ) Քաղաքացի՝ Ամալյա Ղազանչյանը /ք. Գյումրի, խրիմյան Հայրիկ 1թաղամաս, 50/2 հասցեում/ Գյումրի ցանցում բաժանորդ է 2002 թվականից մինչև օրս (հիմք՝«ՀՀ էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության«Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2026 թվականի հունիսի 19-ի տեղեկանք):

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու հաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում է համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով՝ վարչական մարմինը քաղաքացի Ռոբերտ Ալբերտի Ղազանչյանի դիմումը բավարարեց :

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի, քաղաք Գյումրի, Թբիլիսյան խճուղի, 6-րդ փակուղի, 4 հասցեի 76.1 (յոթանասունվեց ամբողջ 1 տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

    1) Ռոբերտ Ալբերտի Ղազանչյանին ծնված 2000 թվականին որպես սեփականություն ։
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Ռոբերտ Ալբերտի Ղազանչյանին ։
3. Քաղաքացի՝ Ռոբերտ Ալբերտի Ղազանչյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ռոբերտ Ալբերտի Ղազանչյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2026-06-23 14:58:40 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**փոխարինող**

2026թվական քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«24» Հունիսի 2026 **թվականի** N 1894 Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊՈՒՇԿԻՆԻ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմեն Հակոբյանի 2026 թվականի հունիսի 18-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հունիսի 18-ին 9080-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արմեն Հակոբյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պուշկինի 1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 0,8 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արմեն Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2026թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հունիսի 2026 **թվականի** N 1895 Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ 61/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վարուժան Բարսեղյանի 2026 թվականի հունիսի 18-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հունիսի 18-ին 9078-2026 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Վարուժան Բարսեղյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շիրակացի 61/2 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 0,4 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Վարուժան Բարսեղյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-06-24 15:55:03 GMT+4
Համապատասխանում է ԷՍԵՆԳԻ կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

**2026թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«24» ապրիլի 2026 թվականի №. 1896 Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑ 9/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №29042026-08-0067) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ալվարդ Խաչատրյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №8675-2026 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինությունների բաժանման սխեմաները և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Սավոյան փողոց 9/7 հասցեում գտնվող բնակելի տունը (վկայական №29042026-08-0067) երկու մասերի բաժանելու նպատակով առանձնացված հատվածներին տրամադրել հասցեներ.

1) Հողամասի և շինությունների բաժանման սխեմաներով առանձնացված առաջին հատվածը հասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ա. Սավոյան փողոց, 3-րդ նրբանցք, 15/2 բնակելի տուն**

2) Հողամասի և շինությունների բաժանման սխեմաներով առանձնացված երկրորդ հատվածը հասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ա. Սավոյան փողոց, 3-րդ նրբանցք, 15/1 բնակելի տուն**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ալվարդ Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«24» հունիսի 2026 թվականի № 1897 Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 3/24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ (ՎԿԱՅԱԿԱՆ №09022024-08-0020) ԸՍՏ ԲԱԺԱՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1284-2026 թվագրմամբ), չափագրման արտոնագիր ունեցող «ՏԱՎՈՒՇ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղարիբջանյան խճուղի 3/24 հասցեում գտնվող հողամասի (վկայական №09022024-08-0020) ըստ բաժաման սխեմայի առանձնացված հասցեավորման ենթակա հատվածներին տրամադրել հասցեներ.
   1) **325.5** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
   **Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ս. Տեր-Գաբրիելյան փողոց, 9/2 հողամաս**
   2) **315.1** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
   **Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ս. Տեր-Գաբրիելյան փողոց, 9/3 հողամաս**
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«24» հունիսի 2026 **թվականի** N 1898 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 2539-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՆՐԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ԱԴԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ № 8 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 122.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 384.10 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Հենրիկ Գարեգինի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր № 230 տրված 2022 թվականի փետրվարի 17-ին) Գյումրի քաղաքի Ս. Գրիգորյան փողոց № 8 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում է 384.10(երեք հարյուր ութսունչորս ամբողջ տասը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունը կառուցված է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված են 122.2(մեկ հարյուր քսաներկու ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Հենրիկ Գարեգինի Ադամյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ բնակելի շինությունը օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 20237JNZFG, 2023EQSPDV ծածկագրերը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով քաղաքացի Հենրիկ Գարեգինի Ադամյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 16-ին № 803 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Ճանաչել քաղաքացի Հենրիկ Գարեգինի Ադամյանի (ծնված 1946 թվականի փետրվարի 8-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ս. Գրիգորյան փողոց № 8 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 384.10(երեք հարյուր ութսունչորս ամբողջ տասը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:

2.Քաղաքացի Հենրիկ Գարեգինի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ս. Գրիգորյան փողոց № 8 հասցեի տան ինքնակամ կառուցված 122.2(մեկ հարյուր քսաներկու ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:

3.Գյումրի համայնքի ղեկավարի «Քաղաքացի Հենրիկ Գարեգինի Ադամյանին պատկանող Գյումրի քաղաքի Ս. Գրիգորյան փողոց № 8 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 13.24 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն օրինական ճանաչելու մասին» 2024 թվականի սեպտեմբերի 2-ի N 2539-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հենրիկ Գարեգինի Ադամյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2026-06-24 12:59:52 GMT+4
Հաստատված է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ կողմից mID

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ
## ՔԱՂԱՔԱՑԻ ՌԱԶՄԻԿ ՍՏԵՓԱՆԻ ՍՈՒՄԲՈՒԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«25»«հունիսի» 2026 թվական N 1899 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հունիսի 24-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Ռազմիկ Ստեփանի Սումբուլյանի (ՀԾՀ՝3012660178, հասցե՝ ք.Գյումրի, Բուլվարային թաղամաս, 104 շենք, 27 բնակարան) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Ռազմիկ Ստեփանի Սումբուլյանին պատկանող MERCEDES-BENZ E 350 մակնիշի 37XL570 պետհամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2024-2025 թվականների չվճարված հարկից (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրամադրված տեղեկանքը):

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 2026 թվականի հունիսի 11-ի դրությամբ տեղական հարկի պարտավորությունների

վերաբերյալ տեղեկանքի համաձայն հարկային պարտավորությունները կազմել են՝ 298.818 (երկու հարյուր իննսունութ հազար ութ հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 236.500 (երկու հարյուր երեսունվեց հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 62.318 (վաթսուներկու հազար երեք հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի համաձայն՝ իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

Իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ հարկային պարտավորությունը փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները.

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.

Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 246 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

Օրենսգրքի 247 հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Օրենսգրքի 251 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 239-րդ հոդվածի 1-ին մասի, 240-րդ հոդվածի 1-ին մասի, 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի, 242-րդ հոդվածի 1-ին մասի, 243-րդ հոդվածի 1-ին մասի, 246-րդ հոդվածի 1-ին մասի, 247-րդ հոդվածի, 251-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդված 1–ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ**

1. Քաղաքացի՝ Ռազմիկ Ստեփանի Սումբուլյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 298.818 (երկու հարյուր իննսունութ հազար ութ հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 236.500 (երկու հարյուր երեսունվեց հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 62.318 (վաթսուներկու հազար երեք հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Ռազմիկ Ստեփանի Սումբուլյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ռազմիկ Ստեփանի Սումբուլյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ**
**ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

2026-06-25 09:39:53 GMT+4
Հաստատված է ԷՍԵՆԳ-ի կողմից

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«25» հունվարի 2026 թվականի № 1900 Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ 23 (ՎԿԱՅԱԿԱՆ №07062013-08-0025) ԵՎ ԷԼԵԿՏՐՈՊՐԻԲՈՐՆԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՇԱՐՔ 1 (ՎԿԱՅԱԿԱՆ №04032025-08-0024) ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Տրդատ Ճարտարապետի փողոց, 7/4 շենք, 3 բնակարան**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-06-26 11:49:46 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2026 թվականի № 1922 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՍԱՄՍՈՆ ԳՈՄՑՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սամսոն Գոմցյանի լիազորված անձ Մոսկով Մաձոյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №9137-2026 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոց 9 հասցեում գտնվող ժառանգության իրավունքով Սամսոն Գոմցյանին պատկանող բնակելի տունը վերահասցեավորել՝

**Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Աղյուսի փողոց, 3-րդ նրբանցք, 28 բնակելի տուն**

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սամսոն Գոմցյանի լիազորված անձ Մոսկով Մաձոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-06-26 11:26:11 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *ՈՐՈՇՈՒՄ*

*«26» հունիսի 2026 թվականի N 1923Ա*

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱԻԴԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻՄԻՐՅԱԶԵՎԻ ՓՈՂՈՑ N26 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 202.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 102.08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Աիդա Վոլոդյայի Մանուկյանին պատկանող Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոց N26 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 202.24 (երկու հարյուր երկու ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ (հիմք՝ ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026ADL3PB ծածկագիր) և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 102.08( հարյուր երկու ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Աիդա Մանուկյանի լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Աիդա Մանուկյանի լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N7194 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացի Աիդա Վոլոդյայի Մանուկյանին (ծնված 1965 թվականի հոկտեմբերի 28-ին) պատկանող Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոց N26 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 202.24 (երկու հարյուր երկու ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Ճանաչել քաղաքացի Աիդա Վոլոդյայի Մանուկյանի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Տիմիրյազևի փողոց N26 հասցեի բնակելի տան հողամասին կից, ավել օգտագործվող 102.08( հարյուր երկու ամբողջ ութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Աիդա Վոլոդյայի Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-06-26 12:13:30 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2026 թվականի N 1924 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի N 1241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 20-ի N 1241-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է Հայաստանի Հանրապետության Կադաստրի Կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 03/06/2026 որոշման պատճառով(փաստաթղթի համար՝ Կ-03062026-08-0197):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝.**

1. 2026 թավականի ապրիլի 20-ի «Քաղաքացիներ Սամվել Ազատի Հակոբյանին և Հարություն Անուշավանի Հակոբյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 1-ին նրբանցք № 17 հասցեի սեփական հողամասում ինքնակամ կառուցված 197,78 քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 12,59 քառակուսի մետր մակերեսով հողամասի եվ նրա վրա առկա 5,93 քմ մակերեսով շինության կարգավիճակի մասին» N 1241-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) Նախաբանի 1-ին պարբերության 10-րդ տողում «շինություն» բառից հետո լրացնել «որը հաշվառված է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023MWG4MV ծածկագրով:».
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Սամվել Ազատի Հակոբյանի և Հարություն Անուշավանի Հակոբյանի լիազորված անձ Իրինա Արամայիսի Եղիազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

Восстановимая подпись

X

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2026 թվականի N 1925 Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ N 41 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 71,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ, 56,4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արթուր Խաչատուրի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20022026-08-0059 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Իսահակյան փողոց N 41 հասցեի հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 56,4 (հիսունվեց ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին, 71,3 (յոթանասունմեկ ամբողջ երեք տասնորդական) արտաքին մակերեսով հասարակական շինությունը, որը հաշվառված է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2026TZAEQA ծածկագրով:

Քաղաքացի Արթուր Խաչատուրի Մելքոնյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Խաչատուրի Մելքոնյանի լիազորված անձ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի մայիսի 26-ին N 7620 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Արթուր Խաչատուրի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Իսահակյան փողոց N 41 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված՝ 56.4 (հիսունվեց ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին և 71.3 (յոթանասունմեկ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական, որի համար տեղական բյուջե ենթակա է գանձման 388,585 (երեք հարյուր ութսունութ հազար հինգ հարյուր ութսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ: Նույն հասցեում ինքնակամ իրականացված 12 (տասներկու) հատ դռների և պատուհանների ձևափոխությունները ճանաչել օրինական, որոնց համար տեղական բյուջե ենթակա է գանձման 65,400 (վաթսունհինգ հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արթուր Խաչատուրի Մելքոնյանի լիազորված անձ Արմեն Ջուլբերտի Խոցանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

Восстановимая подпись

X

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունիսի 2026 թվականի N 1926 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՊԵՏՐՈՍ ԽԱՉԻԿԻ ԲԵՐՆԵՑՅԱՆԻՆ ԵՎ ՆԱՐԻՄԱ ՊԵՏՐՈՍԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ N 103 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 164,44 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Պետրոս Խաչիկի Բերնեցյանին և Նարիմա Պետրոսի Մարկոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17062025-08-0071 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոց 1-ին թաղամաս N 103 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 123,93 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին, 164,44 (մեկ հարյուր վաթսունչորս ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) արտաքին մակերեսով բնակելի շինությունը, որը հաշվառված է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2026EDXKGT ծածկագրով:

Քաղաքացի Պետրոս Խաչիկի Բերնեցյանը և Նարիմա Պետրոսի Մարկոսյանը դիմել են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Պետրոս Խաչիկի Բերնեցյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2026 թվականի ապրիլի 10-ին N 5066 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Պետրոս Խաչիկի Բերնեցյանին և Նարիմա Պետրոսի Մարկոսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոց 1-ին թաղամաս N 103 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված է 123,93 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին, 164,44 (մեկ հարյուր վաթսունչորս ամբողջ քառասունչորս հարյուրերորդական) արտաքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 323782 (երեք հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Պետրոս Խաչիկի Բերնեցյանին և Նարիմա Պետրոսի Մարկոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

Восстановимая подпись

X

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ**

Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ
# «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26»«հունիսի» 2026 թվական N 1927 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հունիսի 24-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ–ի (ՀՎՀՀ՝ 05510886, տնօրեն՝ Սվետլանա Պետրոսյանի) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

«ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ–ի, անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել են սեփականության (օգտագործման) իրավունքով իրեն պատկանող քաղաք Գյումրի, Տերսիտագործների փողոց 29/3 հասցեում գտնվող շինության համար:

Վճարման ենթակա գումարը 2026 թվականի հունիսի 11-ի դրությամբ կազմել է՝ 52.875 (հիսուներկու հազար ութ հարյուր յոթանասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 50.448 (հիսուն հազար չորս հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 2427 (երկու հազար չորս հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

Գումարը հաշվարկվել է 2025-2026 թվականի առաջին կիսամյակը ընկած ժամանակաշրջանի համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համանքապետարանի աշխատակազմի բյուջե եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղեկանք):

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226 հոդվածի համաձայն՝ հաշվառող մարմինները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինները, իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.
4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 224-րդ հոդվածի 1-ին մասի, 225-րդ հոդվածի 1-ին մասի, 226 հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ–ից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել ընդամենը 52.875 (հիսուներկու հազար ութ հարյուր յոթանասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 50.448 (հիսուն հազար չորս հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 2427 (երկու հազար չորս հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ–ին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ–ին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

2026-06-26 10:03:07 GMT+4
Հավաստված է ԷՀՏՆԳ-ի կողմից

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թվական, ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարա
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-
Էլ. փոստ gyumri@gyumri.

# ՈՐՈՇՈՒՄ
# « ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26»«հունիսի» 2026 թվական N 1928 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հունիսի 24-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, «ՇԻՆԱՐԱՐ-97 ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 05510886, տնօրեն՝ Սվետլանա Պետրոսյանի) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

«ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ-ին պատկանող FORD ESCAPE V6 3.0 մակնիշի 145SO45 պետհամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2025 թվականի չվճարված հարկից (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրամադրված տեղեկանքը):

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 2026 թվականի հունիսի 11-ի դրությամբ տեղական հարկի պարտավորությունների

վերաբերյալ տեղեկանքի համաձայն հարկային պարտավորությունները կազմել է՝ 65.135 (վաթսունհինգ հազար մեկ հարյուր երեսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 56.936 (հիսունվեց հազար ինը հարյուր երեսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 8.199 (ութ հազար մեկ հարյուր իննսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի համաձայն՝ իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

Իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ հարկային պարտավորությունը փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները.

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.(…):

Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 246 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

Օրենսգրքի 247 հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Օրենսգրքի 251 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 239-րդ հոդվածի 1-ին մասի, 240-րդ հոդվածի 1-ին մասի, 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի, 242-րդ հոդվածի 1-ին մասի, 243-րդ հոդվածի 1-ին մասի, 246-րդ հոդվածի 1-ին մասի, 247-րդ հոդվածի, 251-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդված 1–ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ**

1. «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ-ից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 65.135 (վաթսունհինգ հազար մեկ հարյուր երեսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 56.936 (հիսունվեց հազար ինը հարյուր երեսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամը, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 8.199 (ութ հազար մեկ հարյուր իննսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ գումար:
2. «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ-ին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ**
**ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

-26 10:11:39 GMT+4
է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թվական, ք Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ
## «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26»«հունիսի» 2026 թվական N 1929 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հունիսի 24-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ–ի (ՀՎՀՀ՝ 05510886, տնօրեն՝ Սվետլանա Պետրոսյանի) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

«ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ–ի, անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել են սեփականության (օգտագործման) իրավունքով իրեն պատկանող քաղաք Գյումրի, Տեքստիլագործների փողոց 29/11 հասցեում գտնվող շինության համար:

Վճարման ենթակա գումարը 2026 թվականի հունիսի 11-ի դրությամբ կազմել է՝ 107.049 (մեկ հարյուր յոթ հազար քառասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 100.422 (մեկ հարյուր հազար չորս հարյուր

քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 6627 (վեց հազար վեց հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

Գումարը հաշվարկվել է 2025-2026 թվականի առաջին կիսամյակը ընկած ժամանակաշրջանի համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համանքապետարանի աշխատակազմի բյուջե եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղեկանք):

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226 հոդվածի համաձայն՝ հաշվառող մարմինները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինները, իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 224-րդ հոդվածի 1-ին մասի, 225-րդ հոդվածի 1-ին մասի, 226 հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ–ից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել ընդամենը 107.049 (մեկ հարյուր յոթ հազար քառասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառք՝ 100.422 (մեկ հարյուր հազար չորս հարյուր քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 6627 (վեց հազար վեց հարյուր քսանյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ–ին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ–ին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ**
**ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

2026-06-26 10:01:03 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

**ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թվական, ք Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«26» «հունիսի» 2026 թվական N 1930-Ա

## ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՈՎԵՏԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1953 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ՆԻՍՏԻ N 20 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Գևորգ Արտաշեսի Ավետիսյանը (անձնագիր՝AT0451409, տրված՝ 10.09.2019 թ. 016-ի կողմից), Աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի 1953 թվականի հունիսի 26-ի նիստի N 20 արձանագրության որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման 16-րդ կետում «Արտաշես Հունանի Ավետիսյանի» փոխարեն գրվել է «Արտուշ Հունանի Ավետիսյան » (հիմք՝ անձնագիր՝ XII-ՍԼ N 624738 տրված II-ՍԼ N 678661 ա/պ հիման վրա, Լեն. քաղ. ՔԿԱԳ բաժնի կողմից, մահվան վկայական՝ ԱԱ N 014069, տրված՝ 05.11.2004 թվականին ):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, և հիմք ընդունելով քաղաքացի՝ Գևորգ Արտաշեսի Ավետիսյանի 2026 թվականի հունիսի 06-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ N 8786 թվագրությամբ)՝ **որոշում եմ՝**

1. Աշխատավորների դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի 1953 թվականի հունիսի 26-ի նիստի N 20 արձանագրության որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) 16-րդ կետի «Արտուշ Հունանի Ավետիսյան» բառը փոխարինել «Արտաշես Հունանի Ավետիսյանի» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գևորգ Արտաշեսի Ավետիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-06-26 16:53:33 GMT+4

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ